



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 185-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 185-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (ՀՕ-248) (այսուհետ՝ Օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին: Օրենսգրքի՝ «Քրեական գործի հարուցումը մերժելը» վերտառությամբ 185-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

2. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի՝ դատարանի կողմից քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելուց հետո դատախազի կողմից քրեական գործ հարուցելու պարտականությանը՝ վերաքննիչ դատարանը գտնում է, որ այնքանով, որքանով դատարանի կայացրած որոշման հիման վրա օրենքով դատախազի վրա դրվում է պարտականություն հարուցելու քրեական գործ, այդքանով օրենսդրական նման կարգավորումը հակասում է Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված՝ դատախազության լիազորություններին: Այլ կերպ ասած՝ այնքանով, որքանով դատարանի կողմից քրեական գործ հարուցելը մերժելու

Ժելու մասին որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը, այդքանով այն չի բխում դատախազի՝ որպես քրեական հետապնդումը և մեղադրանքը տնօրինող սուբյեկտի կարգավիճակից և լիազորություններից: Հետևաբար՝ նաև այս առումով է խախտվում դատական վերահսկողության և դատախազական հսկողության հարաբերակցությունը:

**3.** Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին դատական ակտի արդյունքում, որպես պարտադիր հետևանք, դատախազի կողմից քրեական գործ հարուցելու պարտականություն սահմանող նորմի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի դիրքորոշմանը Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմումը՝ Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասության մասով, չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջները, մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով, իսկ նույն օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ:

Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությունը, այն է՝ «Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը», իրենից ներկայացնում է դատախազի հսկողական իմպերատիվ լիազորություն: Օրենսդրի կողմից սահմանված՝ քրեական գործի պարտադիր հարուցումն իմպերատիվ պահանջ է դատախազի համար և դատարանին վերապահված լիազորություն չէ, **այդ մասով դատարանը որևէ որոշում չի կայացնում:**

Հետևաբար՝ դիմողը չի կարող հանդիսանալ Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը կիրառող և բարձրացնել այդ դրույթի

սահմանադրականության հարց: Այլ կերպ՝ Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի սահմանադրականության հարցով **դիմողն իրավասու չէ** դիմելու Սահմանադրական դատարան:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասության մասով, կարճել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**



**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

9 մարտի 2021 թվականի  
ՍԴԱՌ-43